

քերու ամերը, Յակոբ Սրկ.ը վերանուանելով Պարթեյ քահանայ, Պարթեյ հայրապետներու յիշատակին:

Օծումէն ետք Ս. Հայրը նորընծային յանձնեց Ս. Սկիհը, անոր տալով պատարագելու իշխանութիւն, ապա նորած Պարթեյ քահանայ հայրը իր առաջին «Խաղաղութիւն»ը բաշխեց հաւատացեալ ժողովուրդին:

Այս հոգեպարար արարողութեան ամարտին, Առաջնորդ Ս. Հայրը խօսեցաւ հոգեշունչ քարոզ մը, նորած Պարթեյ քահանային վերջիշեցնելով հաւատքի ու նուիրումի ոգին, թելադրելով որ իր ծառայութիւնը մատուցանէ հայ հաւատացեալ ժողովուրդին, ընթանալով Քրիստոսի ճանապարհէն ու Պարթեյ հայրապետներու ուղիէն:

«Ողջոյն»ի պահուն եկեղեցական դասը Չեռնադրիչ Ս. Հօր առաջնորդութեամբ ողջոյնը ստացաւ Նորընծայ Պարթեյ քահանայի ճակատէն ու ձեռքերէն: Նոյնը տեղի ունեցաւ պատարագի ամարտին՝ աջհամբոյրով, խորներամ ժողովուրդի կողմէ:

Յամարտ Ս. Պատարագի նորընծայ Պարթեյ քահանայն առաջնորդարանէն ներս ընդունեց եկեղեցոյ պաշտօնական մարմիններու եւ պաշտօնական անձնատրութիւններու շնորհատրանքները: Եկեղեցոյ Ատենապետ, Տիար Կարօ Սէթեան յանուն վարչութեան շնորհատրական խօսքով հանդէս եկաւ:

Չեռնադրութեան հոգեպարար արարողութեան ներկայ եղան Արամայիս Ա. Քհն. Միրզայեանը, Հայ Աւետարանական եկեղեցոյ Հովիւ Վեր. Յովհաննէս Գարճեանը, Աւստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդի ներկայացուցիչներ եւ այլ անձինք:

Պարթեյ քահանայի կնքահայրութեան պաշտօնը սիրալոյսով կերպով յանձն առաւ Սիտնիի եկեղեցոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Դպրաց Դաս երգչախումբի Վարչութեան Ատենապետ, Յարութիւն Քէօթօղլանեանը, եկեղեցաւէր եւ հայրենասէր հայորդի մը:

Պարթեյ Քահանայ Գարագաշեան, ծնած է Պոլիս 1942-ին: Նախակրթարանի ուսումը ստացած է Պոլսոյ Եսայեան վարժարանի մէջ, որմէ ետք նետուած է կեանքի ասպարէզ. այդ տարիներու ընթացքին միշտ դիմած է ինքնագարգացման, կապ պահելով հայ գրի ու լեզուի հետ:

Փոքր տարիքէն ծառայած է Պէյօղլուի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, որ եւ ստացած է դպրութեան եւ սարկաւագութեան աստիճանները:

1985-ին գաղթած է Աւստրալիա եւ բնակութիւն հաստատած Սիտնիի մէջ. ժամանման առաջին օրէն սիրով ու նուիրումով ծառայած է Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ:

Պարթեյ քահանայ ամուսնացած է 1969-ին ու հայր է երկու աղջիկ զաւակներու:

Պարթեյ քահանային կը մաղթենք որ ըլլայ «Մշակ առանց ամօթոյ»:

Սիտնի, Աւստրալիա,
16 Յուլիս 1990

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.-Ի

ՀՐԱԺԵՇՏԻ ՊԱՏԱՐԱԳ

Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցոյ երկարամեայ հովիւ Արամայիս Ա. Քհն. Միրզայեան, յառաջացեալ տարիքի ու վատառողջութեան պատճա-

ոով, խնդրանք ներկայացուցած էր Թեմիս Առաջնորդ Ս. Հօր, հանգստեան կոչուելու համար:

Առաջնորդ Ս. Հայրը, Թեմական Խորհուրդի եւ Սիտնիի Եկեղեցւոյ Վարչութեան հետ խորհրդակցելէ ետք, վաւերացուց Ս. Հօր խնդրանքը, զինք հանգստեան կոչելով:

Արամայիս Ա. Քահանայ Միրզայեանը իր հրաժեշտի պատարագը մատուց Կիր. 8 Յուլիս 1990-ին Սիտնիի Ս. Յարութին եկեղեցւոյ մէջ:

Հայր Մեր-ի պահուն Առաջնորդ Ս. Հայրը իր քարոզին մէջ անդրադարձաւ ու վեր առաւ Ս. Հօր բազում տարիներու —32— ծառայութիւնը ու բարեմաղթեց առողջ ու երջանիկ հանգստեան տարիներ: Ս. Հայրը իր պատասխան խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Ս. Հօր, քահանայից եւ սարկաւագաց դասուն, Եկեղեցւոյ պաշտօնական մարմիններուն եւ ժողովուրդին, իր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքին համար:

Յաւարտ Ս. Պատարագի պատշաճ հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ Առաջնորդարանի ընդունելության սրահին մէջ:

Արամայիս Ա. Քհն. Միրզայեանի կը մաղթենք երջանիկ ու առողջ հանգստեան տարիներ:

Սիտնի, Աւստրալիա,
9 Յուլիս 1990

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԽՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.-Ի

ԼՈՒՐԵՐ ԱԽՍՏՐԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ

Նատրալիոյ եւ Ն. Զ.-ի Առաջնորդ, Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօգեան, Յունիս 7—15 Թեմական այցելութիւն տուաւ Փրրթի—Արեւմտեան Աւստրալիա—փոքրաթիւ հայութեան:

Սրբազան Հայրը Կիր. 10 Յունիսին Պատարագեց ու քարոզեց Անկլիքան Ս. Հիլտա եկեղեցւոյ մէջ ու հաղորդեց մօտ 150 հաւատացեալ հայեր:

Նոյն օրը սիրոյ սեղանի շուրջ բոլորուեցան ներկաները ու հաճելի զրոյց ունեցան Ս. Հօր եւ իրար հետ:

Առաջնորդ Ս. Հայրը մնացեալ օրերուն առիթը ունեցաւ հանդիպելու գաղութի անդամներուն եւ անոնց ընտանիքներուն հետ ու կարելիութեան ներսէն չափով հասաւ անոնց հոգեւոր կարիքներուն:

Դշ. 13 Յունիսին Առաջնորդ Ս. Հայրը հանդիպում ունեցաւ Փրրթի Անկլիքան եկեղեցւոյ Առաջնորդ Փիթըր Արքեպս. Գարնլիի հետ, որուն շնորհակալութիւն յայտնեց իր ու եկեղեցւոյ օգնութեան համար, Հայաստանի երկրաշարժի առիթով ցուցաբերուած վերաբերմունքին համար:

Աղան Սրբազան իր շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնելու համար, Փիթըր Արքեպս.ին նուիրեց հաշկական փոքրիկ խաչքար մը, հայ ժողովուրդի եւ եկեղեցւոյ վերաբերմունքը ցուցաբերելով:

Աւստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդի 35-րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Յունիս 29—3 Յուլիս 1990 Աւստրալիոյ Ատըլէյտ քաղաքին մէջ:

Ժողովի բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ երեկոյեան, եկեղեցական արարողութեամբ, որուն մաս կազմեցին հոգեւոր առաջնորդներ, ներկայացուցիչներ ու մասնակիցներ թիով 120 հոգի: Եկեղեցական արարողութեան ընթացքին օրուայ քարոզիչն էր, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նախկին ընդհանուր քարտուղար Տոքթ. Ֆիլիպ Փոթըր: